

թիվ 131/յ

22.02.2016 թ.

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 2-3 ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 729-Ա հրամանով ստեղծված ներքին աուդիտի աշխատանքային խումբը համակարգի գնահատման աուդիտի 2015թ. նոյեմբերի հաշվետվությունը՝

Համալսարանի ռեկտորի 2015 թվականի հունվարի 14-ի թիվ 2-3 հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Խաչատուր Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի փաստաթղթաշրջանառության կարգի 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Աշխատանքային քննության հրամանների նախագծերը ներկայացնում է Անձնակազմի հաշվառման բաժինը: Համալսարանի ռեկտորի կամ պրոռեկտորի մակագրությամբ ստացված փաստաթղթերը Քարտուղարության միջոցով ներկայացվում է Անձնակազմի հաշվառման բաժին: Անձնակազմի հաշվառման բաժինը Իրավաբանական կենտրոնի հետ համաձայնեցնելուց հետո, Համալսարանի ռեկտորին է ներկայացնում համապատասխան հրամանի նախագիծը: Ռեկտորի կողմից ստորագրելուց և քարտուղարության կողմից համարակալումից հետո՝ Անձնակազմի հաշվառման բաժինը հրամանը հանձնում է Համալսարանի Հաշվապահությանը, Հատուկ բաժնին, Ոստանական գործընթացի պլանավորման և կազմակերպման բաժնին, Ֆինանսների ծրագրավորման և վիճակագրության վարչությանը, ինչպես նաև համապատասխան այլ ստորաբաժանումներին և աշխատողներին»:

2. Խաչատուր Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի փաստաթղթաշրջանառության կարգի 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Համալսարանի ռեկտորի կամ պրոռեկտորի մակագրությամբ ստացված փաստաթղթերը Քարտուղարության միջոցով ներկայացվում են Ոստանական բաժնին: Ոստանական բաժինը դիմումները ներկայացնում է դեկանատներ, հաշվապահություն, իսկ արական սեռի ներկայացուցիչների դեպքում նաև Հատուկ բաժնի՝ համապատասխան առաջարկություններ և տեղեկատվություն ստանալու նպատակով: Վերջիններիս կողմից դիմումները ստանալուց հետո Ոստանական բաժինը կազմում է հրամանի նախագիծ՝ համաձայնեցնելով Իրավաբանական կենտրոնի հետ: Ռեկտորի

